

*ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման
համապետական հանձնաժողովի նիստ*

**ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԹԱՑՔՆ ԱՄՓՈՓՎԱԾ 02.09.2011թ.
ԴՐՈՒԹՅԱՄԲ**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

2-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆ

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքը

1. ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ հրահանգչական և մեթոդաբանական փաստաթղթերը թվով 66-ն են, որոնցից 58-ը՝ հաստատված են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) նորմատիվ և անհատական որոշումներով (համապատասխանաբար՝ 5 և 53 փաստաթուղթ):
2. Նորմատիվ որոշումներով հաստատված իրավական ակտերը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերում:
3. Նախապատրաստական և անցկացման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մեթոդական և հրահանգչական փաստաթղթերից, հաշվետվական ձևաթղթերից, ինչպես նաև տվյալների մշակման նպատակով կիրառվելիք դասակարգիչներից ու ծածկագրման ձեռնարկներից անհրաժեշտ տպաքանակով տպագրված են թվով 31-ը:

Շարունակություն

4. Ներկայումս ընթացքի մեջ է մարդահամարի դաշտային աշխատանքների իրականացման ժամանակ կիրառվելիք հրահանգչական փաստաթղթերի, հաշվետվական ձևաթղթերի և մարդահամարի հարցաթերթի՝ թվով 32 միավորի տպագրությունը, այդ թվում՝ մարդահամարի հարցաթերթը:
5. ՀՀ 2011թ մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները կազմակերպելու համար ձեռք են բերվել ՀՀ 48 քաղաքների, ք.Երևանի 12 վարչական շրջանների, 5000 և ավել բնակչություն ունեցող 37 գյուղերի սխեմատիկ հատակագծերի անհրաժեշտ թվով օրինակներ:
6. ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների շրջանակում՝ ՀՀ 829 գյուղական համայնքների աշխատակազմի քարտուղարների կողմից կազմվել և ՀՀ ԱՎԾ է ներկայացվել յուրաքանչյուր համայնքում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները:

Շարունակություն

7. Ընտրված և ուսուցման համապատասխան դասընթաց անցած թվով 660 աշխատակիցների միջոցով երեք փուլերով՝ մեկական ամիս ժամկետով քաղաքներում (48+12) և խոշոր գյուղերում (37) իրականացվել է տների (շինությունների) ցուցակների կազմումը, սխեմատիկ հատակագծերի միջոցով (2 քաղաքի և 24 գյուղերի ցուցակագրումը ներկայումս ընթացքի մեջ է):
8. Բազմաբնակարան շենքերի վերաբերյալ բնակարանային ֆոնդի սեփականատերերից ստացվել են՝ շենքի շահագործման հանձնման տարեթվի, արտաքին պատերի շինանյութի և դրանցում յուրաքանչյուր բնակարանի ընդհանուր մակերեսի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման լրացված հարցաթերթերը, այդ թվում ՀՀ պաշտպանության նախարարությունից՝ իրենց տնօրինության (ենթակայության) տակ գտնվող շենք/շինությունների վերաբերյալ, մարդահամարի հարցաթերթի համապատասխան բաժնի տվյալների լրացման նպատակով:

Շարունակություն

9. ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ ԱՎԾ նախագահի համատեղ հրամանով հաստատվել է՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում ծառայող Հայաստանի Հանրապետության դիվանագետների և նրանց հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների հաշվառման կարգը:
10. ՀՀ պաշտպանության և ՀՀ արդարադատության նախարարների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետի, ՀՀ ԱՎԾ նախագահի՝ ՀՀ 2011 թվականի մարդահամարի ժամանակ բնակչության առանձին խմբերի (գինձառայողներ, ձերբակալվածներին պահելու վայրերում և քննչական մեկուսարաններում գտնվող, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձինք) հաշվառման կարգը հաստատող համատեղ հրամանը ներկայումս գտնվում է համաձայնեցման փուլում:

11. «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդված 7), ՀՀ կառավարության մայիսի 12-ի թիվ 674-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագիրը (հարցաշարը), ինչի հիման վրա ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 09.07.2011թ. թիվ 34-Ա որոշմամբ հաստատվել է մարդահամարի հարցաթերթը:

12. Ներկայումս, ՀՀ մարզերում այն տարածքների մասերով, որտեղ արդեն ավարտված են քաղաքների (46+12), 5000 և ավել բնակչություն ունեցող գյուղերի ցուցակագրման աշխատանքները (12), ընթացքի մեջ են դրանց կազմակերպական պլանների կազմման աշխատանքները, որոնց հիման վրա մարզերում պետք է ձևավորվեն մարդահամարային, հրահանգչական և հաշվային տեղամասերը, դրանցում ներգրավվելիք ժամանակավոր աշխատակիցների կազմը, ինչպես նաև նրանց հրահանգավորման ժամանակացույցը:

Մարզային հանձնաժողովի նիստեր

2011թ. հուլիսի 26-ից օգոստոսի 17-ը՝ ՀՀ ԱՎԾ նախագահն իր աշխատանքային թիմով մասնակցել է ՀՀ 2011թ.

Մարդահամարի նախապատրաստման և անցկացման մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների նիստերի աշխատանքներին: Նիստերին հրավիրվել էին նաև մարզերի բոլոր համայնքների ղեկավարները:

ՀՀ ԱՎԾ կողմից առաջարկվել է հետևյալ օրակարգը.

1. Մարդահամարի կարևորությունը
2. Մարդահամարի նախապատրաստման աշխատանքների ընթացքը
3. Մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին.
 - ա) հաշվարարների թեկնածուների ներկայացում
 - բ) գյուղապետարանների, դպրոցների, մանկապարտեզների, ամբուլատոր պոլիկլինիկաների շենքերում ժամանակավոր՝ մինչև 1.5 և 2.5 ամիս տևողությամբ սենյակների տրամադրման մասին
4. Այլ հարցեր

Հասցային տնտեսության

- Ընթացքի մեջ են նաև ՀՀ համայնքների սահմանների ճշգրտման, դրանցում հասցային տնտեսության կարգավորման, փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, համարանիշերի և անվանացույցերի տեղադրման գործընթացները:


ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակավոր
անձնակազմը ՀՀ տարածքում
/ նախնական/

	Աշխատանքի տևողությունը (ամիս)	Թվաքանակը (մարդ)
Ցուցակագրողներ	1	660
Մարդահամարի գործերը համակարգող տարածքային կոորդինատոր	4.5	61
Մարդահամարի տեղամասի վարիչ	2.5	182
Մարդահամարի տեղամասի վարիչի օգնական	2.5	182
Հրահանգիչ-հսկիչներ	1.5	2425
Հաշվարարներ	1	12124
<u>Ընդամենը</u>		<u>15634</u>

Ժամանակավոր աշխատասենյակների պահանջարկ

	Մարդահամարի տեղամաս՝ սեպտեմբերի 1-ից, <u>2.5 ամիս</u>	Հրահանգչական Տեղամաս՝ սեպտեմբերի 15-ից, <u>1.5 ամիս</u>
Ք.Երևան	55	733
Արագածոտնի	8	104
Արարատի	18	201
Արմավիրի	16	203
Գեղարքունիքի	15	173
Լոռու	17	196
Կոտայքի	15	195
Շիրակի	17	195
Սյունիքի	10	105
Վայոց ձորի	3	41
Տավուշի	8	97
Ընդամենը	182	2243

**ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ
(ՄԱՐԴԱՀԱՄԱՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ
5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (I-V))**





Ուրբաթ, 02 Մեպտեմբերի 2011

Ակիզբ

Վիճակագրությունն այսօր

Տվյալների բազաներ

Լրացման Ձևեր

▶ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

▶ ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

▶ ՄԱՍՈՒԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▶ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

▶ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ
ԵՎ ՀԱՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▶ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

▶ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՉԵՎԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՄՓՈՓ
ՏՎՅԱԼՆԵՐ

▶ ՏԱՐԵԳՐԵՐ

▶ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

▶ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

▶ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾՆԱԿՈՒԹՅՈՒՆ

▶ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2011

Հայաստանի
Հանրապետության Օրենքով
Մարդահամարի Մասին

«Հ կառավարության
որոշումներ

«Հ ՎՊՆ որոշումներ (և
իրավական ակտեր)

«Հ 2011թ. մարդահամարի
նախապատրաստման և
անցկացման համապետական
հանձնաժողով

Հանդիպումներ «Հ մարզերում
և Երևան քաղաքում

Փորձնական մարդահամար

Իրավական ակտեր

▶ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՋՆ
ՏՈՒՑԱՆԻՇՆԵՐ

▶ ԱՐԻՍՏՈՒՆԵՐ

[Ակիզբ / Մարդահամար 2011](#)

Մարդահամար 2011



Հայաստանի Հանրապետության
2011թ. մարդահամար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
26-Ի ԹԻՎ 301-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-
21-Ը ՆԵՐԱՈՅԱԼ